



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

540

Ley

1094





1863

1863

1863

1863

Внѣ

Шла въ Свѣтъ 20 числа

Шла въ Свѣтъ 20 числа

Шла въ Свѣтъ 20 числа

Шла въ Свѣтъ 20 числа

Отъ Ея Превоисходительства Гонимыхъ
Христовыхъ Еккліастовъ Назаревъ
наименіемъ въ Свѣтъ 20 числа
Гонимыхъ. 1864 года.

ՏԵՌՎԱՏՈՐ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ .

ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ




ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

ՍՈՎԵՏՆԵՐՆԵՐ

Ս. ԳԵՅՆԻՐՈՒՐԿ

1864.



ՏՐՈՎԱՏՈՐ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

1837 5072

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 8 Апрѣля 1864 года.

782

√ 134

S-99

Տ Ր Ո Վ Ա Տ Ո Ր

✓

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԶՈՐՍ ՄԱՍՆ ԲԱԺԱՆՎԱԾ

ԵՐԵՎԱՆԻ Գ. ՅՈՎԱԿԻՓԻ ՎԵՐԳԻ

Աշխարհային Յոհաննէսի Սահրաբեանց



2003

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ

1864

ՀԱՅԿ ԵՐԿՐ

ՀԱՅԿԱԿԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ

ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ

Ռ. Պատկանանի Տպարանում



ՀԱՅԿ

ՀԱՅԿԱԿԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ

ЕГО ИМПЕРАТОРСКОМУ ВЫСОЧЕСТВУ

ГОСУДАРЮ ВЕЛИКОМУ КНЯЗЮ

НИКОЛАЮ НИКОЛАЕВИЧУ СТАРШЕМУ

ВСЕПОКОРНѢЙШЕ ПОСВЯЩАЕТЪ

Иоаннесъ Саргатьянцъ.



ՆՈՐԻՆ ԿԵՅՍԵՐԵԿԵՆ ԲԵՐՉՐՈՒԹԵՆՆ

ԿԱՅՍԵՐԱԶՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻՆ

ՆԻԿՈՂԵՅ ՆԻԿՈՂԵՅՆՎԻՉ ԵՐԻՅՈՒՆ

ԱՄԵՆԱԹՆԵՐՀԱՐԵՐ ՆՈՒԻՐՈՒՄԷ

ՅՈՂԿԱՆՆԷ՝ ՍԿԵՐԱԿԷՆԵՅ:

8977



1094-2014

№1091

(5433)
3-38

Ե. Օ. Դ

Ահրող լինելով Երաժշտութեան, չէինք կարող չըսիրել Տրովատորը, մանաւանդ այն պատճառով, որ Պ. Յովսէփ Վերդիու երաժշտական լեզուն ամեն փոքր ի շատէ կրթված մարդու հասկանալի է, թէ՛ և այդ մարդը երաժիշտ չէր: Առ հասարակ խոսակցական երաժշտութիւնը ազդումէ սրտի վրայ, ուստի և զիւրըմբռնելի է. մինչդեռ Քերմանականը, որ առանց պատրաստութեան դժար է հասկանալ, ներգործումէ առաւել մտքի սահմանում: Թէ երաժշտութիւնը կրթումէ ճաշակը և ամբողջումէ սրտերի կոշտութիւնը, այդ դարաւոր ժամանակներից խոստովանված ճշմարտութիւն է և մեր տկար փաստաբանութեան անկարօտ:

Ահրելով Տրովատորը, մեր ուժի չափով ծանօթ լինելով երաժշտութեան վսեմ արուեստին, և սրտանց ցանկանալով մեր սիրելի Ազգի օրէ, որ յառաջադիմութեանը, սորանից քանի՞ տարի առաջ, ընդունեցինք Պ. Մ. Նալբանդեանցի այս գործը հայերէն թարգմանելու հրաւերը ու նախ և առաջ սկսեցինք խոսակցական լեզուին պարապել փոքր ի շատէ:

Եսօր, մեր թարգմանութիւնը դրած է Ազգի առջևը. խոստովանում ենք նորա թերութիւնը. բայց մեզ դատաւորք կարող են լինել լոկ երաժիշտը, որովհետև մենք ստիպված ենք եղել այս թարգմանութեան մէջ ամեն բան զոհել երաժշտութեան: Ար ազգի լեզուով էլ որ թարգմանվել է այս գործը, քիչ շատ հեռացել է բնագրից, և տակաւին այնպիսի լեզուներում, որ ունին իրենց սեփական երաժշտութիւնն անգամ, ինչպէս Ֆրանսիացիք և Ռուսք: Անտարակոյտ, տեղ տեղ, մենք էլ հեռացել ենք, բայց այդ չէ փոխում բանի միտքը, մնաց որ նոյն իսկ խոսակցական երգիչը շատ տեղ կրճատելով, կրկնելով և ազաւաղելով է երգում, երաժշտութեան պահանջողութեան համեմատ, այնպէս, որ բանի միտքը բնաւ կորչումէ: Եթէ լոկ կարգալու համար ոտանաւոր գրողը համեմատաբար գերի է չափի, ապա ուրեմն նա, որի ոտանաւորը պիտի յարմարի երաժշտական խաղերի, բացարձակաբար ստրուկ է. մնաց որ բովանդակութիւնը մի կողմից, բնագիրը միւս կողմից յայտնում են նոյնպէս իրենց պահանջողութիւնը:

Մենք միայն ենք, որ պահանջողութիւն չունինք, և սրտանց կ'ուրախանանք, եթէ մեզանից առաւել հմուտները աւելի արժանապէս թարգմանեն այս գործը: Բայց մինչև այդ լաւերի երևան ելնելը, եթէ մեր աշխատութիւնը ընդունելութիւն գանէ, մենք արդէն վարձատրված և քաջալերված լինելով բարոյապէս, ձեռնամուխ կը լինինք ուրիշ գործերի թարգմանութեան:

Հարկաւոր ենք համարում ասել և այս, որ մենք թէպէտ բովանդակ գործը թարգմանել ենք, բայց ոչ բոլորի ձայնագիրքը գրեցինք, և պատճառը այս է, որ մեր թարգմանութիւնը լոկ սիրողների համար է և ո՛չ թատրոնական բեմի համար, որի երգիչքն էլ բնաւ չկան:

Պատրոնում, նաև լոկ երկու խօսքը եղանակով է ստվում, իսկ տան մէջ երգելու համար այդ երկու խօսքի կամ ուրիշ այդպիսիների ձայնագիրքը գրելում խորհուրդ չտեսանք, ուստի և զանց արինք, աշխատելով լոկ այն կտորների վրայ, որ յարմար և սիրելի են ամեն երաժշտութեան սիրողի:

Եւրոպական գիտութեանց խօսքը լավումէ այսօր Հայ բերաններից այո՛, սակաւաթիւ են այդ բերանքը, բայց քչութիւնը չքութիւն չէ: Թո՛ղ և եւրոպական երաժշտութիւնը հնչէ և թնդացնէ այն սարերը, ուր հազարաւոր տարիներ առաջ բամբիռներով երգումէին մեր զիւցազանց գործերը:

Խոնարհ թարգմանիչք:

Ս. Պետերբուրգ

1 Օգոստոսի 1864.

Միջին դարերի կեանքից առնված մի վիպասանական գործ է այս: Անշուշտ, պէտք չէ սորա վրայ նայել որպէս մի երևելի բանաստեղծութեան, և աշխարհի երեսին սորա գատած ընդունելութիւնը Պ. Վերգիու շնորհքն է. երաժշտութիւնն է սորա երեսը պարզայնորը:

Երուէնայի մայրը, մի պառաւ Յինգա կին, կոմս Լուսինանի հօր հրամանով, որպէս կախարդող կոմսի մանուկին, էրվել է խարուկի վրայ: Աղուչեանն, կամենալով կատարել իր անբաղջ մօր կտակը, որ խարուկի վրայից, բոցերի միջից արել էր նորան, որ առնու կոմսից իր մահի վրէժը, գողանու՞մէ կոմսի մի որդին, այսինքն այս տեղ ներգործող կոմս Լուսինանի եղբայրը և տանու՞մէ մի անասպատ տեղ, որ էրէ նորան կրակում: Երեսայի լայրը, աղաղակը շարժումն Աղուչեանյի գուժը. և երբ նա յողջողովում էր, ահա մի ցնորք պատու՞մէ նորա երևակայութիւնը, երևում է նորա աչքին նորա մայրը խարուկի վրայ և իր վերջին շնչում բոցերի և ծուխերի միջից նորան կանչելիս — «Ա՛ն իմ վրէժը»: Բայց պէտք է սակ այս տեղ, որ Աղուչեանն երբ տանու՞մէր կոմսի որդին էրէլու, իր հետ ունէր և իր զաւակը: Երբ երևումէ Աղուչեանյին այս ցնորքը, սարսափած և միանգամայն խելագարված, կոմսի որդու տեղ յափշտակումէ իր սեփական որդին և ձգումէ նորան բորբոքված կրակի մէջ, որ առաջուց վառել պատրաստել էր:

Երբ խելքը զլուին է գալիս և տեսնումէ իր սխալը, էլ այնուհետև սիրտ չէ անում կոմսի որդուն էրել, այլ պահումէ իր մօտ և սնուցանումէ որպէս իր որդին, որ մեծանալով դառնումէ Տրովատր, այսինքն՝ երգիչ-ասպետ:

Ողբերգութիւնը սկսվումէ այն տեղից, որ Տրովատորը և կոմս Լուսինանը երկուքն էլ սիրահարված են մի պալատական օրիորդի վրայ Լէոնորա անունով. բայց սա անձնատուր է Տրովատորին և մերժող կոմսի սիրոյցայտ առաջարկութեանցը: Մի անգամ երկուքն էլ գալով Լէոնորայի բնակարանի մօտ, հանդիպումն միմեանց և որպէս հակառակորդք դուրս են գալիս մենամարտութիւն: Սորանով վերջանումէ առաջին գործողութիւնը:

Երկրորդում, Մանրիկոն (Տրովատորի անունն է) մենամարտութենից վերաւորված գտնվումէ Յինգաների վրանում, այն տեղ է և նորա մայրը. յանկարծ լուր է ստանում, որ Լէոնորան խարուկելով սուտ համբաւից և կարծելով թէ Մանրիկոն մեռած է, մտնումէ կուսանաց վանք: Իսկոյն

Հաւարումէ իր մարդիկը և գնումէ դէպ ի այդ վանքը, որ խափանէ այդ բանը և առնու Ղէճնորային: Բայց այդ միջոցին կոմս Լուսինեանն էլ նոյն դիտաւորութեամբ այն տեղ է պատահում, նոյնպէս գինուորներով: Կրկին անգամ Հանդիպումեն միմեանց հակառակորդքը և մի փոքրիկ պատերազմից յետոյ Մանրիկօի մարդիկը յաղթումեն և նա Ղէճնորային առած տանումէ, դէպ ի Կաստելօր ամրոցը, որ նոր էին առել, և որ բղէշեր յանձնել էր Մանրիկօի կառավարութեան:

Լըրրորդ գործողութիւն: Այն միջոցին, երբ Մանրիկօն և Ղէճնորան պատրաստուել էին, որ գնան եկեղեցի իրենց ամուսնութիւնը օրհնելու, Մանրիկօն լուր է տանում, որ իր մայրը գերի ընկած լինելով կոմս Լուսինեանի ձեռք, տանվումէ դէպ ի խարոյկ, որ էրվի: Կոմս Լուսինեանը շրջապատել էր իր բանակով Կաստելօր ամրոցը, և այդ պատճառով, երբ Աղուչնեան ման էր դալիս պարսպից դուրս, ընկաւ կոմսի ձեռք, որ դատապարտեց նորան դէպ ի խարոյկ որպէս գողացող իր եղբօր և որպէս մայր իր ոխերիմ թշնամու:

Մանրիկօն այս լուրը առած, վազումէ որ օգնէ իր մօրը և ազատէ նորան կրակից. բայց ինքն էլ գերի է բռնվում և մօր հետ միասին դրվում է Կաստելօր բերդի մի աշտարակի մէջ, որովհետև կոմս Լուսինեանը առնումէ Կաստելօր ամրոցը:

Չորրորդ գործողութիւն: Ղէճնորան վշտացած այս տխուր անցքերից, գնումէ բանտի մօտ, որ պատահի կոմսին և խնդրէ նորանից Մանրիկօի փրկութիւնը: Կոմսը մերժումէ և խօսել չէ ուղում: Բայց երբ Ղէճնորան երդնումէ թէ խոստանումէ կատարել կոմսի խնդիրը, այսինքն նորանը լինիլ, այն ժամանակ կոմսը յօժարումէ ազատել Մանրիկօին: Բայց Ղէճնորան չկամենալով ուխտադրուժ լինել Մանրիկօին ընդդէմ, այս միջոցին ընդունումէ իր մատանու մէջ պահած թոյնը, և յետոյ կոմսի հրամանով մտնումէ բանտը, այն խորհրդով որ Մանրիկօին դուրս ուղարկէ այն տեղից, որ ազատվի և գնայ գլխի ճարը տեսնէ, իսկ ինքը մնայ այն տեղ, որ կոմսը ներս գալով անշունչ գերակ գտնէ: Բայց Մանրիկօն չիմանալով Ղէճնորայի թոյն ընդունելը և կարծելով թէ նա անձնատուր է եղել կոմսին և մերժել է իր սերը, չէ կամենում փրկութիւն ընդունել մի այդպիսի դրուժանից և կշտամբումէ նորան: Այս միջոցին թոյնը անումէ իր ներգործութիւնը և Ղէճնորան մեռնումէ Մանրիկօի ոտքում: Կոմսը, որ տեղեկացաւ այս բաներին, ներս մտնելով հրամայումէ գլխատել Մանրիկօին. իսկ Աղուչնային էրել խարուկի վրայ: Աղուչնեան քնած է, երբ Մանրիկօին տանումեն դէպ ի պատժարանը. երբ զարթումէ և սկսումէ կանչել թէ ո՛ւր է իր որդին, կոմսը յայտնումէ նորան բանի զօրութիւնը: Այն ժամանակ Աղուչնեանն էլ իր կարգով յայտնումէ նորան, թէ նորա սպանածը էր նորա գողացված եղբայրը:

ԳՈՐԾՈՂ ՄԵՉԻՆՔԸ.

ԿՈՄՍ ԼՈՒՍԻՆԵԱՆ.
ԼԷՈՆՈՐԱ, օրհորդ Տիրուհի.
ԱԶՈՒՉԵՆԱ, Յինգա կին,
ՄԱՆՐԻԿՅՈ, Տրովատոր (Երգիչ).
ՖԵՐՆԱՆԳՅՈ, Կոմսի աջակիցը.
ԻՆԷՍ, Լէոնորայի ընկերուհին.
ԲՈՒՅԻՅ, Մանրիկօի աջակիցը.
ԾԵՐՈՒՆԻ, Յինգա տղամարդ.

Կոմսի սպասարբը: — Լէոնորայի ընկերուհիքը: — Պաշապան զօրքը: — Յինգաներ, տղամարդք,
կնանիք, մանկուհիներ, ախտապանք և զինուորներ: Գործողութիւնը կատարվում է, մի մասը Պիս-
կայիայումը և մի մասը Սրագանի մէջ, սասն և հինգ զարու սկզբում:

ՏՐՈՎԵՏՈՐ

Ա. Ա. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս. Ն.

ՄԵՆԱՄԵՐՏՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա. Ա. Ա. Զ. Ի. Ն.

Դասի՞քը Սէրաֆիբիայ պալատի: Կողմական դռները, որ տանումն գէպ է Լուսինեան կոմսի սենեակները. Ֆերնանտոն, և կոմսի շատ սպասուորները, որ պառկած են դռների մօտ: Մի բանի զինուորը քայլումն խորքում:

(Դուքս գալով ասումէ սպասուորներին)

Ֆերնանտո

Վե՛ր կացե՛ք, վե՛ր կացե՛ք,
Կոմսը անցնելով կարող է տեսնել.
Նա երբեմն իր սիրականի
Պատուհանի տակ անցնում է գիշերներ:

ՍԳՆԵՒՈՐԷ

Անշուշտ, նախանձն է նորան մաշողը,
Քայց ո՞վ նորա սիրտ թունաւորողը:

Ֆերնանտո

Տրովատորն, որ այգիների մէջ շրջում,
Քիշերները երգ երգելով պարապում
Հակառակորդ է թրվում.
Նորանից կոմսն է վախում:

ՍԳՆԵՒՈՐԷ

Դու մեր ծանրացած աչքերի
Քունը խափանելու մասի
Պատմէ, բուն անցքը Կարծիայի,
Եղբօրը այս մեր կոմսի:

ՖԵՐՆԵՆԴՕ

Կ'ասեմ, եկե՛ք,
իմ մօտ հաւարուեցէ՛ք:

(Սպասարբը մտնումնն)

ԶԻՆՈՒՈՐՔ

Մե՛ք է՛լ:

(Նշե՛ն գալիս)

ՍՊԵՍԵՒՈՐՔ

Լսեցէ՛ք, լսեցէ՛ք:

(Բարբը շրջապատունն ֆերնանդին)

(№ 1.)

ՖԵՐՆԵՆԴՕ

Երջանիկ հայր երկու սիրուն գուկի,
Բարի կոմս Լուսինեանն էր.
Հարազատ ծիծմայրը երկրորդ մանկիկի,
Օրոցի մօտ քնուձեր.
Մի առաւօտ լոյսը դեռ բացվում էր,
Նա գիտուածով զարթումէ,
Եւ գիտէ՛ք ով մանկիկի մօտ կանգնած էր:

ՍՊԵՍԵՒՈՐՔ

Ո՛վ էր, սա մեզ, ո՛վ էր:

(№ 2.)

ՖԵՐՆԵՆԴՕ

Քարշելի Յինգա սեւ պառաւ կին էր,
Շատխօս խարբայ հարցուկ կախարդ էր.
Մանկիկի երեսին գէշ գէշ նայումէր,
Խոժոռ աչքերը արևնով լի՛քն էր.
Ծիծմայրը վախցած բարձրաձայն կանչեց
Գրսից օգնութիւն, մատով ցոյց տուեց
Կախարդի վերայ. ծառայք վազեցին,
Եկան պատեցին, տըզան փրկեցին,
Անգամ կընջ վրան կանչելով
Տանից դուրս արին սաստիկ ծեծելով:

ԽՈՒՄԲ

Իրաւամբ սյղպէս խստիւ են վարվել,
Յիմար պառաւը ինչե՞ էր եկել:

(Չայնս ուղիւս գերմանիէ՛ Հայրս.)

ՖԵՐՆԵՆԴՕ

Ատումէր, եկել է երեխայի համար,
Որ ապագան գուշակէր.

Սուտ էր խօսում . խեղճը մի շար տենդից, երկար
Առողջութիւնը կորուցած էր,
Քոյնը դեղնած, հալած, մաշված և թուլացած
Ամէն գիշեր ջերմումէր,
Եւ խղճալի լացի ձայնից չըկար կասկած,
Որ արդէն կախարդված էր:

(Խումբը սարսփումէւ)

(Չայնս արդէս «Գարշալէկ Յինգա».)

ՔԵՐՆԵՆԳՕ

Այն կախարդ կրնոջ շուտով բրնձեցին,
Խարկում էրվելու դատաստարտեցին.
Բայց անիծածը աղջկանը յանձնեց,
Հանել վերէժը նորան կըտակեց:
Եւ այդ աղջիկը լիով կատարեց.
Կորաւ մանուկն էլ չըգտնուեց.
Հոտած ածուխներ գըտան այն տեղում
Ուր կախարդ կինն էրվել էր կրակում .
Այդ ոսկերքն էին խեղճ երեխային,
Որ խանձված գօսցած դեռ ծխումէին:

ԽՈՒՄԲ

Ո՛հ անիծած, ո՛հ կախարդ կին.
Այս ի՞նչ սարսափ, ի՞նչ զարհուրանք, ո՛վ, Տէր իմ :

ՈՒՄՆՔ

Իսկ նորա հայրը...

ՔԵՐՆԵՆԳՕ

Ապրեցան տխուր քանի մի օրեր,
Չգիտէր, բայց սիրտը վկայումէր,
«Որդիս մեռած չէ», ասումէր:
Երբ մահը մտնեցէ էր,
Մեր պարոնին կտակեց
Որոնել իր եղբայրը, ո՛հ,
Սա ի զուր աշխատեց:

ՋԻՆՈՒՈՐՔ

Եւ այդ կախարդի մասին
Մէկ լուր չիմացանք:

ՔԵՐՆԵՆԳՕ

Ոչինչ չիմացանք, ո՛հ եթէ
Ես նորան մէկ պատահէի...

ԽՈՒՄԲ

Բայց կարո՞ղ էիր ճանաչել:

ՔԵՐՆԵՆԳՕ

Հաշուելով
Անցկացած տարիքը... կարող էի:

ԶԻՆՈՒՈՐՔ

Պէտք է շուտով

Մօր քամակից դէպ ի դժոխք ուղարկել :

ՔԵՐՆԵՆԴՕ

Դէպ ի դժոխք կարծումեն որ քնակվումէ
Դեռ այս աշխարհում այս կորած հոգին,
Գիշերուայ մթնում շատ երկցած է
Զանազան ձևով չի՛ք կախարդուհին:

ԽՈՒՄԻ

Եւ այդ ստոյգ է:

(№ 3).

ՄԵԿՉ

Նորան այս տեղ տանիքի վրայ են տեսած

ՄԻՒՍԸ

Յոպոպի պէս, բայց երբեմն էլ բու դարձած

ՄԻ ՈՒՐԻՇԸ

Ուրիշ անգամ ագռուի սէս, բուի նման է կանչում
Եւ արշալուսի մօտերը արագ չքանում:

ՔԵՐՆԵՆԴՕ

Ժանտախտ ստացաւ մէկ ծառան կոմսին,
Որ ջինգա կնոջ զարկել էր ճակտին,
Մեռաւ, մեռաւ ողորմելին.

(Բուլբի երեսին զարհուրած է երևում):

Երկցել է խեղճին բուի կերպարանքով,
Մի արձակ սենեկում, լուիկ, և առանձին.
Բոցավառ աչքերով նայելով նայելով,
Ահա արձակել է մի սոսկալի գոյին
Զարկել է կէս գիշեր կոշնակն այդ միջոցին...

(Զարկած է կէս գիշեր):

ԲՈՒՋՐԸ

Ա՛հ, անիծեալ լինիս դժողքը անցնիր.

(Ըմենքը սարսփած են, լվումէ թմբուկի ձայն, զինուորք, մար-
դեկ, վաղումն դէպ ի տեսարանի ի որքը. ծառաները շտապումն
դէպ ի գուռը):



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Պալատի պարտեզը: Ե՛լ կողմը մարմարեայ սանդուխք, որ տանումէ դէպ ի պալատի միջին սենեակ-
ները: Խոր գիշեր. մութ ամպերը ծածկումեն լուսինը:

Գալես են Լէօնորսն և Ինէսը.

Ինէս Ինչի՞ ես սպասում, զնանք, ժամանակն է անցնում,
Լսեցիր, որ թագուհին քեզ ներս է կանչում:

Լէօնորս Արդէն այս երկրորդ գիշեր է անցկենում
Առանց տեսութիւնի:

Ինէս Ահեղ բոց կայ քո ներսում,
Ո՛հ ինչպէս, և ս՛ր տեղում
Կամ ի՛նչ բանից սկսվում:

Լէօնորս Ձինախաղի մէջ, եկած էր ասպետն.
Սեւ էր հագուստը, զրահն ու զարդը վահանի.
Սեւ էր նորա սաղաւարտը առանց նշանի.
Ձինախաղում քաջ յաղթական հանդիսանալով
Ես զուգեցի նորա գլուխը դալինի ստակով.
Էլ յետ նորան քաղաքական վառվեց պատերազմ,
Ես կորուցի նորան սէքիցս, դէմքը զերթ երազ
Երևակայումէր. հոգիս և խնդրում տեսնել.
Մի անգամ, երբ շատ ժամանակ էր անցել...

Ինէս Ի՛նչ պատահեցաւ:

Լէօնորս Ականջ դիր:

(Ձե՛ 4).

Լուռ էր գիշերը խաղաղ էր,
Երկինքը պայծառ լուսով,
Լուսնեակը արծաթափայլ էր
Եւ նայում ուրախ դէմքով.
Յանկարծ քաղցրիկ հնչիւն երգի
Ինչպէս անոյշ լսեցի,
Մեղմ ու շարժող հնչումէին
Նորա լարերը գալինի.

1094-2014
3433
58



Ոտանաւորն էր տխուր,
 Երգողն էր մի Տրովատոր.
 Խօսքերն էին նուիրական
 Ձերթ աղաչանք առ Սստուած,
 Շուտ կրկնուէր նա իմ անուն,
 Ինձի էին այն խօսուածք.
 Վազեցի դէպ ի պատուհան,
 Ո՛հ, երգողն իսկ այս տեղ էր,
 Որպէս հրեշտակ աւետարեր
 Սիրոյն վրայ երգնուէր:
 Ո՛հ, ճաշակեց իմ սիրտը
 Ողջ աշխարհի բերկրանքը:

Ինչո՞ւ

Այդ քո պատմածը վրդովումէ
 Իմ հոգին. ես վախենումեմ:

Լեռնորս

Ձո՛ւր

Ինչո՞ւ

Կասկած, և տրտում նախազգացութիւն
 Այդ խորհրդաւոր մարդն է ծագեցնում.
 Մոռացիր նորան:

Լեռնորս

Ո՛հ, ինչ սասել ես, հերիք է:

Ինչո՞ւ

Լսէ՛ իմ ընկերաբար տուած խորհրդին, լսէ՛:

(ՁԵ 5.)

Լեռնորս

Մոռացի՛ր, ո՛հ, այդ քո ասած խօսքը
 Հասկանում չէ իմ սիրող սիրտը.
 Այդպիսի սէրն ինչպէս կարելի է
 Տրտում մտածութեամբ շրջապատել.
 Սէրն, որ ինձ միայն հասկանալի է,
 Որով սիրոս արդէն վառվել է բորբոքվել:
 Թէ բաղդս առաջուց նշանակել է,
 Թէ ես նորան սիրտի չի պատկանիմ,
 Քան որ էլ ասրիմ մնամ կենդանի,
 Բարւոք է, որ այս բոպէիս մեռանիմ:

Ինչո՞ւ (Ինքը երան)

Ձղջալ հարկ չլինի

Մի օր այդքան սէրը, թէ չէ...

(Եւրոս գնումն գէպ է տուն)



ՏԵՍԱԲԱՆ ԵՐՐՈՐԳ

Գալիս է ԿՈՄՈՆԸ

Լ'ո՛ւռ է գիշերը և խաղաղ .
 Անշուշտ, դեռ խոր քնած է մեր թագուհին.
 Բայց զարթուն է նորա չքնաղ սպասուհին.
 Ո՛հ, Լէոնորա. ինձ յայտնի է պատուհանի այդ լուսից,
 Որ փայլումէ գիշերային կանթեղից,
 Սիրու բոցը էրումէ իմ լերդ ու թոք,
 Ես գալիս եմ... ես եկել եմ տանդ մօտ...
 Պիտի տեսնեմ, պիտի խօսեմ, դու լսէ,
 Մեր երկուքի պատեհ ըռպէն հասած է.

(Սիրով զմայլած երթումէ դեպի սանդուխքը, լսում է
 գաւինի հնչիւն, այն տեղ կանգնում է:)

ԿՈՄՍ

Տրովատորն է. ես դողո՛ւմ եմ:

(№ 6.)

ՏՐՈՎԱՏՈՐԻ (ձայնը.)

Մէն մենակ մնացած աշխարհքում,
 Բաղդի դէմ անդուլ պատերազմում,
 Յոյսը գրեւ է միայն մէկ սրտի
 Սիրողն Տրովատոր:
 Բայց երբ նա այդ սիրտը ձեռք բերէ,
 Եւ նորա սուրբ սէրը վայելէ,
 Նա երջանիկ է, քան մի թագաւոր,
 Որպէս Տրովատոր:

ԿՈՄՍ

Ո՛հ, այս ձայնը, ո՛հ, նախանձ.
 Չեմ սխալվում. իջնումէ ահա:

(Փաթաթվում է իր վերարկուի մէջ:)

ՏԵՍԱԲԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Գալիս է ԼԵՈՆՈՐԱՆ.

(Սաղկալ գէպ ի համեր:

ԼԵՈՆՈՐԱՆ

Իմ հոգին:

ԿՈՄՍ

Ի՞նչ անեմ:

(Երեսը դարձեալ է):

ԼԵՈՆՈՐԱՆ

Առաւել ուշ եկար

Սովորական ժամանակից.

Սրտիս զարկերով ես հաշուեցի բոպէքը,

Եւ խղճալով, քեզ իմ գիրկ բերեց սէրը:

(Չայնը Տրովատորի, ծառերի մէջից.)

Գրուեցան.

(ՍՅԳ միջոցին լուսինը դուրս է գալիս ամպերի տակից, և լուսաւորում է անձանոց մարդը, որի երեսը ծածկած էր սաղաւարտի ընթակալով:)

ՏԵՍԱԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Գալիս է ՄԱՆՐԻԿՈՆ.

(չիտված նայելով, երկուսին ևս ճանաչում է, ընկնում է Մանրիկոի ոտքը.)

ԼԵՈՆՈՐԱՆ

Ի՞նչ ձայն էր, աւճալ, ես սխալվեցայ,
 Մութը ինձ նենդեց, տեսնել չի կարցայ,
 Քեզ կարծեցի և խօսեցայ,
 Խօսքս քեզ էր, ոչ թէ դորա,
 Քեզ, որ իմ հոգին խնդրումէ,
 Քեզ միայն ցանկանումէ,
 Քեզ սիրումեմ, քեզ երզնումեմ
 Անասճման և սուրբ սիրով:

ԿՈՄՍ

Համարձակվումես.

(Վեր կացնելով Լէւորային.)

ՄԵՆԲԻԿՕ

Ո՛հ, չեմ կասկածում :

ԿՈՄՍ

Կատաղութիւնս բորբոքվումէ.
Բանց երեսդ, եթէ վատ չես.

ԼԷՈՆՈՐԵ

(Աւաղ ինձ.)

ԿՈՄՍ

Յայտնէ քո անունը:

ԼԷՈՆՈՐԵ

Ո՛հ, խնայեցէ՛ք:

(Թագուշ, Մանրիկօին ասումէ. շէտ, հեռացիք:)

ՄԵՆԲԻԿՕ

Ճանաչէ՛,

Մանրիկօն եմ ես.

ԿՈՄՍ

Դո՛ւ. — ինչպէս,

Անմիտ, աներես,
Ուրջելի՛ զօրքից,
Մահապարտ, յանդգնել ես
Արքայական դ՞ուռը դաւ .

ՄԵՆԲԻԿՕ

Ինչի՞ ես սպասում. կոչէ՛ պահապանքը
Եւ յանձնէ քո թշնամին,
Թող վճռէ դահճի սուրը:

ԿՈՄՍ

Քո մահու.

Բոպէն ահա մօտեցել է.
Ո՛վ, սիրամուրր, եկ:

ԼԷՈՆՈՐԵ

Կո՛մս.

ԿՈՄՍ

Իմ բարկութեան զոհն է այս,
Որ քեզ բերումեմ

ԼԷՈՆՈՐԵ

Ո՛վ երկինք. — դու դադարեցուր.

ԿՈՄՍ

Իմ հետ:

ՄԵՆԲԻԿՕ

Երթանք:

ԼԷՈՆՈՐԵ

(Արդեօք ի՞նչ անեմ
Միայն մի ձայն իմ կողմից... և կարող է
Կորուստ բերել:) Ինձ լսէ, —

ԿՈՄՍ

Ո՛չ .

(Երկր 3-րդ № 7.)

Նախանձոտ և արհամարհված սէրը
 Բորբոքելով ինձ էրումէ.
 Ո՛վ տարաբաղդ, լո՛կ քո արիւնը
 Մարեւ փոքր ինչ կարող է.

(Վեճորային.)

Ո՛վ անմիտ, դու ասացիր նորան թէ քեզ սիրումեմ,
 Ուտի ես էլ նորա կեանքը չէ պիտոյ խնայեմ
 Ահա դու ինքնին մատնումես
 Որ դէպ ի մահ դատաւարեմ ես.

ԼԵՈՆՈՐՍ

Չափաւորէ դու մի վայրկեան,
 Չափ դիր զուր բարկութեան.
 Ես, միայն ես, պատճառ եղայ
 Այս տխուր եղելութեան.
 Չսպէ քո կատաղութիւնը,
 Ո՛հ, որպէս փոխարէն
 Կոխէ սուրդ սրտիս մէջը,
 Որ չէ ուզում քեզ սիրել.

ՄԵՆՐԻՅՕ

Այդ գոռոզի սաստն ի զուր է,
 Նա պիտի կործանվի:
 Մարդ որ սէրը ձեռք բերել է
 Անմահ է այդ, վերջ չունի:

(Գոմսին)

Ճակատագիրդ կստարված է,
 Օրհաս ժամդ զարկել է.
 Ե՛ւ քո հոգին և՛ քո կեանքը
 Այժմ իմ ձեռքս յանձնված է.

(Երկու ախոյեանները սուրբը հանած գնում են.
 Վեճորան ուշաթափ է ընկնում.)

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Մ Ա Ս Ն

ՔՍՓՇՈՒՆԿԱՆԷ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի բնակարանի աւերակ, և արհեստի մի սարի լանջում: Տեսարանի խորքում երևում է վառված մի մեծ կրակ. — Լուսարացի սկիզբն է. ՄԱՌՈՒՉԵՆՆԵՆ նստած է կրակի առջևը. — ՄԱՆԻՒԿՈՒՆ էր վերարկուի մէջ փաթափված, մի եղեղնեայ օթոցի վրայ, պառկած նորա մտա, նորա սաղաւարտը գրած է էր սուրբ, ձեռքին բռնած է սուրբ օրի վրայ ստառած նայումէ: Յինգաների խումբը փռուած են շուրջ բոլորը:

(Ճ 8.)

(Դաշնակ)

ՅԻՆԿԱՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Տեսէ՛ք — գիշերվայ խաւար ծածկոցը,
Անվերջ երկնքից բաց է վերանում.
Ինչպէս մի այրի վերջացրած սուղը,
Սև շորերը անձից հանում մերկանում.
Դէ՛՛հ գործի, դէ՛՛հ գործի առէ՛ք մուրձերը.

(Վառարանից առնելով տաքացած երկաթը դարձնում են սառի վրայ, և սկսում են մուրձերովը շափաւոր զարկել. աղամարդք և կնանիք փոխ առ փոխ. վերջապէս բոլորը միասին երգում են հետեւեալը.)

Ինչ զարգարված են պայծառ օրերը
Յինգանաների.

ՏՂԱՄԱՐԻՒԷ

(Դառնալով դէպի կնանիքը և փոքր զագարելով.)

Լցէ՛ք գինին բաժակները, նա մեզ ուժ տալով
Չովայնումէ հոգու մարմնի ծարաւն աշխուժով.

(Կնանիքը Լցնում են փայտե բաժակների մէջ և տալիս.)

ՔՈՒՐԸ

Ո՛հ, տեսէ՛ք, տեսէ՛ք արևի մի շողը
Առաւել առոյգ խաղումէ մեր բաժակի մէջը
Դէ՛՛հ գործի, դէ՛՛հ գործի, առէ՛ք մուրձերը.
Ինչպէս փայլումէ աջողակ աստղը
Յինգանաների.

ՄԱՌՈՒՉԵՆՆԵՆ

(Երգում է: Յինգաները մտնում են նորան.)

(№ 9.)

Դիզվումէ բոցը, վայրենի ամբոխը
 Վազումէ կրակի մօտ, ուրախ են դէմքերը.
 Ձայներ ցնծալի, հեռուն լավումէ.
 Ձօրքերով պատած, կինը գալիս է.
 Դէմքեր չարագուշակ լուսաւորումէ:
 Մահառիժ բոցն, որ դէպ ի երկինք վերանումէ:
 Դիզվումէ բոցը, հասնումէ զօհը.
 Սև շորեր հագած բորիկ ոտքերը.
 Մահ, կանչող ձայներ բարձրանումեն ընդհատ
 Մէկ ձորից միւս ձոր կրկնում արձագանք.
 Դէմքեր չարագուշակ լուսաւորումէ
 Մահառիժ բոցն, որ դէպի երկինք վերանումէ:

ՅԻՆԳՍ

Տխուր է քո երգածը:

ԱԶՈՒՉԵՆՍ

Այնպէս է, տխուր է,
 Ինչպէս պատմված անցքը,
 Որ այս տեղ ճիշտ կատարված է,

(Դարձնելով զլուրը դէպ ի Մանրեկօն, և անյագարար մեմուալով.)

Հանէ՛ իմ վրէժը — հանէ՛ իմ վրէժը.

ՄԵՆԻԿՕ

Միշտ խորհրդաբար ես խօսում.

ԳՆՈՒՍԻ ՅԻՆԳՍ

Ընկերներ, օրն առաջ է գնում.
 Երթանք հացի դին վաստկելու, վե՛ր. վե՛ր.
 Իջնենք մօտակայ քաղաքները.

ՏՂԱՄԵՐԴ-Ք

Երթանք.

(Շուտով հաւարումն զօրձեցիք և դնումն պարկերի մէջ.)

ԳՆՍԻՔ

Երթանք:

(Բարբը իջնումն հովտի մէջ կամաց կամաց հեռանալով.
 Նոցա միջից մեծը յետ մնալով երգումէ հետեւալով.)

Ի՞նչ զարդարված են սւայծառ օրերը
 Տինդաների.

ՄԵՆԻԿՕ

(Վերկենալով.)

Այժմ մենակ ենք արդ յայտնէ
 Այդ տխուր պատմութեան եղելութիւնը:

ԱԶՈՒՉԵՆՍ

Մի՛թէ դո՛ւ չգիտե՞ս.

Ստոյգ է մանկական օրերից դու թողեցիր ինձ,
 Փառքի խայթոցը քո սիրտն էլ ծակեց.
 Իմ երգածն է մի ստոյգ պատմութիւն,
 Քո անմեղ մեծ մօր ահարկու մահի:
 Անիծած կոմսը զբարտեց նորան,
 Որպէս կախարդող իր փոքրիկ մանկան.
 Եւ էրեց այս տեղ, ուր վառուլում այդ կրակ.

(Յոջ է տալիս կրակը որի մօտ կանգնած է Մանրիկօն.)

ՄՆՆԻԿՈ

Աւանդ, տարաբաղդ:

(Սարսափելով հեռանում կրակից.)

(№ 10.)

ԱԶՈՒՉԵՆՆ

Տանումէին նորան շղթայած,
 Սաստիկ տանջելով.
 Երթումէի որդիս գիրկս առած,
 Քամակից լայլով,
 Փորձ փորձեցի ճեղքել ամբոխը...
 Չ՛ւր, ինձ վարեցին
 Եւ խեղճ մայրս զ՛ւր ինձ աշխատեց
 Յորհնել, շլթողին.
 Հայհոյանքներ թափումէին վատ,
 Նիզակով խոցում
 Չորնալու զինուորքը և դէպ
 Ի խարոյկ քշում.
 Այնժամ, թուլցած ձայնով կանչեց ինձ,
 Ա՛յ իմ վրէժը.
 Յախտեան իմ սրտում մնաց
 Այդ տխուր ձայնը:

ՄՆՆԻԿՈ

Յետոյ առի՞ր վրէժը:

ԱԶՈՒՉԵՆՆ

Ես գողացայ կոմսի մանուկը,
 Քաշելով բերի այս տեղ, ահա պատրաստ էր
 վառված կրակը.

ՄՆՆԻԿՈ

Կրակը. ո՞վ երկինք, և դու կարողացար.

ԱԶՈՒՉԵՆՆ

Յաւելով նորա վրայ, ես մնացի թուլցած.
 Եւ որպէս թէ քնից զարթած,
 Յետոյ, երբ տեսայ յանկարծ
 Այն սև մահու տեսարանը, իր
 Ահարկու պատկերով.

Երբ բացուեցաւ պատժարանը, և մայրս
 Գունատ դէմքով .
 Բորիկ և չարչարված, և վերստին նորա ձայնը,
 Ա՛հ իմ վրէժը, լսեցի,
 Իմ դողդոջուն ձեռքերով,
 Զոհը յանկարծ բռնեցի,
 Եւ դէպի վառ կրակի մէջը,
 Բոլոր ուժով ձգեցի:
 Եւ ցնորքը փարատվեցաւ, և մայրս
 Երևում չէր
 Միայն կրակը տեսնումէի, որ
 Իր զոհը լափումէր:
 Յանկարծ յետ դարձայ որ նայիմ ,
 Ո՛վ Աստուած, ի՞նչ եմ տեսնում ,
 Անգուժ կոմսի զաւակը ո՛ղջ
 Կեցած է իմ առջևում:

ՄԵՆԻԿՕ
 ԱԶՈՒՉԵՆՆ
 ՄԵՆԻԿՕ
 ԱԶՈՒՉԵՆՆ

Ո՛հ. ի՞նչպէս:
 Ես իմ որդին էրէցի:
 Այդ ի՞նչ զարհուրելի խօսք է:
 Եւ այժմ յիշելով փշաքայլումեմ...:

(Աղուշնան տերած ընկնումէ տախտի վերայ: Մանրիկո՞ծ զբազմած այդ զարհուրելի պատմութեան վրայ մտածելով, և զարմացած լուռ մնումէ մի վայրկեան:)

ՄԵՆԻԿՕ
 ԱԶՈՒՉԵՆՆ
 ՄԵՆԻԿՕ
 ԱԶՈՒՉԵՆՆ

Ես քո որդին չե՛մ. ես ո՞վ եմ, ի՞նչ եմ ուրեմն.
 (Շտապելով դէպի նա, և աշխտտելով ուղղել իր սխալը)
 Դու իմ զաւակն ես
 Բայց ասացիր թէ...:

Ո՛հ, կարելի է...
 Ի՞նչ ես կամեհում, երբ ես այն բաների վրայ եմ
 մտածում
 Այն զարհուրելի փորձանքի վրայ, գրեթէ ցնորվումեմ
 Եւ յիմար յիմար խօսքեր բերանիցս դուրս տալիս:
 Մայր... մի՛ թէ, քեզ համար քնքոյշ մի մայր եղած չե՛մ
 միշտ.

ՄԵՆԻԿՕ
 ԱԶՈՒՉԵՆՆ

Այդ ուրանալ կարող չե՛մ:
 Քեզ փրկել եմ երկու անգամ,
 Մի՛ տքդ է, երեկոյին, պատերազմի դաշտումը.

Բեւիլլայի, ուր տեղ քո մահուան լուրը
Տարածուել էր. միտքդ է, որ ես խկոյն գալով
Թաղելու համար առի մարմինդ.
Բայց գեռ շունչ կենդանական վրադ տեսնելով,
Միթէ մայրական սիրոյ գուժ չէ՞ր, որ քեզ ցոյց տուի.
Անդադար զգայուն սրտով քո վերայ աշխատելով
Մինչև ողջ վերքերդ բժշկեցի.

ՄԱՆՐԻԿՕ (Հգարս հգարս.)

Այն վերքերի նշանները
Բոլորը այս տեղ են կուրծքիս վերայ. ես միայն մնացի
Անհամար փախչողներից, թերևս կամենալով
Թշնամիներին ընդդիմանալ: Անիրաւ կոմս
Լուսինեանը յարձակուեցաւ իմ վերայ իր
գրօշակիցներով:
Ես ընկայ. բայց, ընկայ քաջութիւնով:

(№ 10 պատմություն)

ԱԶՈՒՉԵՆՍ

Ահա գոհունակութիւնը
Այն անիրաւ, անօրէնի
Քո նորա կեանքը փրկածիդ տեղ.
Բայց ի՞նչ նոր և անկարծելի
Գթութիւն էր քո արածը.

ՄԱՆՐԻԿՕ

Ո՛վ մայր իմ, ինքս չեմ հասկանում, թէ ի՞նչ էր:

(№ 10 պատմություն)

Չինաթափած իմ առջևը
Նորան գետնի երեսին ձգել էի.
Փայլումէր գլխին վրայ իմ սուրը
Եւ այն տեղ կատարումը պիտի տայի.
Յանկարծ մի գաղտնի զօրութիւն ինձ չթողեց
Եւ իմ ձեռքերը խկոյն թուլացրեց.
Մարմինս բոլոր սառեցաւ,
Գողալով կարկամեցաւ:
Եւ մի ձայն, երկնից զերթ գալիս էր,
Որ ինձ ասումէր. «Մի՛ սպաներո՛ս:

(Երկրորդ № 10 պատմություն)

ԱԶՈՒՉԵՆՍ

Բայց անշնորհքի հոգու մասին

Երկինքը, երբէք չի խօսիլ.
 Ո՛հ, թէ քո բարդից կրկին անգամ
 Պատահի անիծածին հետ կովիլ,
 Լսէ՛, ս՛վ սրդի, որպէս Աստուծոյն,
 Եւ իմ պատուէրը կատարէ՛ իսկոյն:
 Այդ քո թուրը, մինչև կոթը,
 Խրէ՛ թշնամու սրտի խորքը.

ՄԱՆՐԻԿՕ

Գու հաւատա՛, որ իմ թուրը
 Պիտի մանէ նորա սիրաւը.

(Լավում էրկարասն հնչին փողի)

Երևի Բուխը լրտես է ուղարկել.
 Կարելի է. — (ինքը ևս հնչեցնումէ փողը.)

ԱԶՈՒՉԵՆՍ

Առ իմ վրէժը.

(Ենթիվթար քնում աստամանակ, իրեն չհասկանալով)

Գալիս է ԼՐԱՐԵՐԸ

ՄԱՆՐԻԿՕ (Լրարերին.)

Մօտեցիր յայտնէ,
 Աջողակ էր հետևեալ պատերազմը.

ԼՐԱՐԵՐ

Այս նամակի մէջ գրվածը, քեզ կը պատասխանէ.
 (Տալիս է նամակը, Մանրիկոն կարդումէ)

ՄԱՆՐԻԿՕ

„Մենք խլեցինք Կաստելօրը,
 Բռնչելը քեզ պատուիրումէ
 Պաշտպանել այդ ամբողջը.
 Այս որ կարդաս շուտ գալ նայէ՛.
 Սուտ համբաւից խարուելով, լսելով թէ
 Գու մեռել ես, այս տեղ մտտակայ կուսանաց վանքում՝
 Չեռնադրվելու է Լէոնորան՝. Ո՛հ Աստուած.

(Կակալի հառաչանքով)

ԱԶՈՒՉԵՆՍ (Մութ կասկածանքով.)

Ի՞նչ կայ.

ՄԱՆՐԻԿՕ (Լրարերին.)

Շուտ գնա՛ իջիր ձորը,
 Եւ ինձ համար մէկ ձի բեր —

ԼՐԱՐԵՐ

Իսկոյն —

ԱԶՈՒՉԵՆՍ (Միջամուտ լինելով)

Մանրի՛կօ. —

ՄԱՆՐԻԿՕ

Ճամանակ մի կորցնելը —
 Գնա՛ ինձ սպասէ սարի առջևը.

(Լրարերը շտապով երթումէ)

- ԱԶՈՒՉԵՆՆԵՐ Ի՞նչ է նշանակում այս բոլորը.
- ՄԵՆՐԻԿՈ (Կորցնել — ո՛հ անտանելի է. Կորցնել՝ այնպիսի հրեշտակը).
- ԱԶՈՒՉԵՆՆԵՐ (Սա ցնորվել է.)
- ՄԵՆՐԻԿՈ Մնաս բարով —
(Դնում է սաղափարը զլին, առում է վերաբերելու)
- ԱԶՈՒՉԵՆՆԵՐ Ո՛չ. կացի՛ր. լսէ՛:
- ՄԵՆՐԻԿՈ Թո՛ղ, երթամ՛,
- ԱԶՈՒՉԵՆՆԵՐ (Իշխանաբար.) Կացի՛ր. Ի՛նչ եմ, որ ասումեմ՝ քեզ —

(№ 10 պարտի.)

Տակաւին թոյլ և տկար ես
Անտառախիտ ճանապարհն և ամայի
Անմտաբար ցաւի վտանգի կ'հանդիպիս.
Կուրծքիդ վէրքերը նորից կը բացվին
Ո՛չ, անտանելի է քեզ արձակել,
Ձի իմ արիւնն է այդ քո արիւնը
Երբ թափես նորան քո երակներէց,
Ո՛հ, այդ կը քամվի իմ սրտի խորքից:

(Երկրորդ № 10 պարտի.)

ՄԵՆՐԻԿՈ

Է՛լ մի վայրկեան կը զրկվիմ
Իմ բարելի յոյսերից.
Ձեն կարող արդ երկինք, երկիր
Բնաւ այս տեղ պահել ինձ.
Ո՛հ, թողիր ինձ, ո՛վ մայր, երթալ
Թէ չթողուս կը ցաւիս.
Դու կը տեսնես առջևդ ընկած
Մեռած որդիդ կակիծից.

(Նա հեռանում է, շնայելով Սղուշնայի ստիպանքին)



ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

Վանքի բնակարանի առջևը, Կաստելոր ամրոցի մօտ, խորքում կան ծառեր. դիչե՛ր է. ԿՈՄՍԸ, ՓԵՐՆԱՆՏՈՆ, և մի քանի ծառաներ, փաթաթված վերարկուի մէջ, մօտենումն զգաստութեամբ:

ԿՈՄՍ Բնաւ մարդ չկայ, դեռ չէ լսվում
Սովորական պաշտօնի հնչիւնը —
Ես ճիշդ ժամանակին հասայ:

ՓԵՐՆԱՆՏՈՆ Ո՛վ պարօն, յանդուգն գործ է անելուդ:

ԿՈՄՍ Յանդուգն է, երբ այս կատաղի սէրը,
Գրդռելով հպարտութիւնս, ինձանից պահանջումէ:
Թշնամիս մեռաւ, խորտակված էր ամեն արգելք,
Որ իմ իղձս կատարվի, և ահա կանգնումէ սա նորից
Իմ ընդդէմ. Ի՞նչ... սեղան. բայց ո՛չ, ուրիշի
լինելու չէ
Լէոնորան. — Լէոնորան իմն է:

(№ 11.)

Նորա մէկ քաղցր ծիծաղը ասողի լուսից առաւել է...
Նորա սիրուն դէմքի ցոլքը քաջութիւնս նորոգումէ...
Ա՛հ, սէրը, սէրը, ամեն կողմից ինձ բարեխօս իմ
պաշտպանը.
Նորա կրակոտ լոկ նայուածքից կը լուէ սրտիս
փոթորիկը.

(Սյդ միջոցին հնչումէ ապաշխարութեան զանգահարութիւն:)

Ի՞նչ հնչիւն է, ո՛վ երկինք —

ՓԵՐՆԱՆՏՈՆ Այդ նշանակումէ
Չեոնադրութեան պաշտօնի մօտենալը.

ԿՈՄՍ Ո՛հ, պէտք է յափշտակել նորան
Քանի դեռ չէ հասած սեղան.

ՓԵՐՆԱՆՏՈՆ Ո՛հ, զո՛ւր է:

ԿՈՄՍ Լ. ուէ՛.
Չեմ լսում: Այդ ծառերի ստուերի տակ
Պահուեցէ՛ք հանդարտ: Ո՛հ, ահա շուտով

(Ֆերմանդոն և միւս սպասուորները հեռանում են):

Իմը լինելու է. բոլորովին պատած եմ կրակով:

(Տարացած, նայելով դռների ամեն կողմը, որ տեղից Վե-
նորան անց է կենալու. ֆերմանդոն և նորա հեռակիցը
ատում են ցած ձայնով.)

ՓԵՐՆԱՆԴՈ և ՀԵՏԵԻ. Ի՛նչ յանդգնութիւն. երթանք պահտովինք
Այն խորհրդական ծառերի տակ:
Յանդգնութիւն. երթանք, լո՛ւռ ու մո՛ւնջ
Նորա կամքին համեմատ:

(№ 12.)

(Մահաբեր կատաղութենով.)

Ինձ համար, ժամ օրհասական,
Քո վայրկեանները դարձուր շտապէ.
Ուրախութիւնն որ ինձ է սպասում,
Անմահական մի ուրախութիւն է:
Իմ հակառակորդը կարող չէ էլ
Ընդդէմ դուրս գալ իմ սիրուս.
Ատուած քեզ ինձ համար ստեղծել
Դու պարգև ես իմ հոգուս:

(Դառնովումէ իր ընկերների մ'ջ.)

(Կուսանաց արտաբերութեամբ ներսից)

Ո՛վ դու խորհուրդ սոսկալի, ցաւալի դուստր Եւայի,
Մահուան ժամուղկը տեսնես բովանդակ այս աշխարհը.
Լոկ երանգ է միայն. և բոլոր յոյսերն են ունայն:
Մտիր դու մեր խմբի մէջ, ծածկէ քողով երեսդ,
Թո՛ղ, էլ աշխարհի հայեացք չաղտորեն քո սիրտը.
Գարձի՛ր դէպի երկինքը, բաց են նորա դռները:

ՏԵՍԱԲԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Գալիս է ԼԵՈՆՈՐԵՆ, ԻՆԷՍԸ և Նոյա քամակից կնանիք:

ԼԵՈՆՈՐԵ (Գառնալով Նոյա.)

Ինչի՞ լաց էք լինում:

ԿՆԵՆԻՔ

Ո՛հ, որովհետև

Գու մեզ բարորովին թողումես.

ԼԵՈՆՈՐԵ

Ով քաղցր ընկերուհիք.

Ոչ մի ուրախութիւն, մի յոյս երկրիս մէջ ճարկելու

Չէ՛ ինձ համար, ես հեղութեամբ կամենումեմ

Գառնալ գէպի Նա, Որ միայն կարող է ինձ մխիթարել

Եւ յետոյ, քաւելով մեղուցեալ հոգիս, միաւորվել

Իմ կորուցած սիրականի հետ, ընտրեալների մէջ.

Արդ, սրբեցէք այդ ձեր արտասուքը

Առաջնորդեցէք գէպի սեղանը.

(Նառջ երթալով)

(Գալիս է յանկարծ Կոմս և վրդոված)

ԿՈՄՍ

Ո՛չ, ամենևին ո՛չ —

ԿՆԵՆԻՔ

Կո՛մս.

ԼԵՈՆՈՐԵ

Ո՛հ, երկինք.

ԿՈՄՍ

Քեզ համար կայ գէթ մի սեղան,

Ուր մեր պսակը սխտ՝ կատարվի —

ԿՆԵՆԻՔ

Այս ի՞նչ լըբութիւն.

ԼԵՈՆՈՐԵ

Անմիտ, ո՛ւր ես եկել այս տեղ

ԿՈՄՍ

Որ քե՛զ առնում.

(Նյս տակով յարձակվում: Լեւորայի վրայ, կամենալով յափտակել Նորան. բայց այդ միջոցին հրաշքի նման յայտնվումէ Մանրիկոն, ամենքը վրդոված բացազանդաննս.)

ԼԵՈՆՈՐԵ

Նորի՞ց ծնար. հաւատաւ ես կարո՞ղ եմ,

Իմ մ՞տ արդեօք քեզ տեսնումեմ.

Այս մէկ երանգ է ցնծալի

Մարդկութիւնից վեր. հրաշալի՛.

- Իմ սիրտը յափշտակված այդքան ուրախութեամբ
 Կարող չէ իշխել թայց այս է զարմանք.
 Ասա երկինց ես այս տեղ իջել,
 Թէ քեզ հետ երկինք ես եմ վեր ելել:
- ԿՈՄՍ** Մեռելները ահա թողնում են իրենց խաղաղ գերեզմանը—
 Գժոխքն զոհից հրաժարվում է որ խոսվէ իմ բաղդը.
 Քայց տակաւին թէ հողում չես եւ չէ կտրած կեանքիդ
 թելը,
 Եթե ապրել ցանկանումես փախի՛ր գնա դու այս տեղից:
- ՄԱՆՐԻԿՕ** Ո՛չ երկինքը, ո՛չ դժոխքը ինձ չեն առել իրենց մէջ.
 Մահի հարուածք, այդ ստոյգ է, ինձ տուել են գէթ
 դահիճք.
 Գետերն ունին սաստիկ ընթացք անյաղթելի զօրութիւն,
 Անօրինին Աստուած դէ՛մ է. իսկ ինձ հասաւ օգնութիւն.
- ԿՆԱՆԻՔ (Լեոնորային.)** Երկինքը լսեց քո աղօթքը
 Եւ գթացաւ քո վրայ.
- ՓԵՐՆԱՆԻՔ և ՀԵՏԵԻ. (Կամսին.)** Բաղդը քեզ ընդդիմանալով
 Միշտ պաշտպանում է նորան.

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳԻ

Գալես և ԲՈՒՒՅՆ և Իր հետ մի խումբ զինուորք:

- ԲՈՒՒՅ** Կեցցէ՛ Ուրջելը.
- ՄԱՆՐԻԿՕ** Իմ քաջ զինուորներ.
- ԲՈՒՒՅ** Եկէ՛ք.
- ՄԱՆՐԻԿՕ (Լեոնորային.)** Տիկին, իմ հետ:
- ԿՈՄՍ (Ընդդիմանալով.)** Դու յոյս ունիս.
- ԼԵՆՆՈՐԱ** Աւա՛ղ,
- ՄԱՆՐԻԿՕ (Կամսին.)** Հեռացիր.
- ԿՈՄՍ** Ուզումես յափշտակել.
 Երբէք:

(Մերկացնում է սուրբ.)

ԲՈՒՅ և ՋԻՆՈՒՈՐԲ **Կըտենենք.**

(Շրջապատման կոմիտե.)

ՔԵՐՆԱՆԻՅՈ և ԵՆՈՒՅԵՔ **Ինչի՞ թողումես պարոն.**

(Բուխը, զննորքը կոմիտեի ևեռքից թուրը առնումն.)

ԿՈՄՍ

Խեղբս բըրբովին կորցնումեմ.

(Ձեռքերը շարժելով կատաղան.)

ԼԷՈՆՈՐԸ

Ես վախենումեմ.

ԿՈՄՍ

Ո՛հ, իմ սիրտը ալեկոծվումէ.

ԲՈՒՅ և ՋԻՆՈՒՈՐԲ (Մանրիկային.)

Եկէք, քեզ համար բաղլն աջողակ է.

ՔԵՐՆԱՆԻՅՈ և ԵՆՈՒՅԵՔ (Կոմիտե.)

Ներէ, ներելը այժմ վատութիւն չէ.

(Մանրիկան բաշխելով տանում է Լեոնորային — Կոմսը արդելված մնում է, կնանկը վախեցած վազումն զէպի վանքը — վարդապետը ցած է ընկնում.)



Ե Բ Բ Ո Ր Դ Մ Ա Ս Ն

ՅԻՆԻՅ ԿՆՈՋ ՈՐԴԻՆ

ՏԵՍԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Ջօրաց բանակ — Ե՛լ կողմը Լուսինանի վրանը՝ որի վերայ ծածանում է զօրապետի գրօշակը: — Հեռուից երևումն կաստելօր ամրոցի աշտարակները: — Սմեն սեղ մարդիկ են կացած պահապան զննորաներից: Ոմանք խաղով են պարապում, ոմանք զէնքերը սրբում, և ոմանք ման գալիս:

ԽՈՒՄԲ (Մին քանիսը զննորաներից.)

**Այժմ խաղումենք մենք սակրախաղ,
Քայց փոքր յետոյ, խտակ ուրիշ խաղ —
Եւ պողովատիկ թրերի բերանը
Նորից կը ներկէ կարմիր արիւնը.**

(Լավում է զննորական փողի ձայն, բուրբ նայումն զէպի այն կողմը, որ տեղից գալիս է հնչիւնը.)

ՈՐՄԵՔ

Ահա դալիս են մեզ օգնել.

(Մի մեծ դուժարակ պարագիւր զօրքի զօրջակներով,
անց են կենում բանակի առջեկոյ.)

ՄԻՒՍԸ

Գորքո նման են քաջերի.

ԲՈՒՐԸ

Էլ էլ պիտոյ սպասել.

Երթանք ամրոցը պաշարել.

ՓԵՐՆԱՆԻՍ

Այո՛, քաջ ընկերներ. սասած է

Գնդապետին, յանձնած է.

Վաղն այդ ամրոցը պաշարել

Եւ կարելի է յուսալ

Լաւ աւարով յետ դառնալ.

ՔԻՆՈՒՈՐՆԵՐԻՑ

(Մի քանիսը.)

Գու հրաւիրումես պօր գալ.

(№ 13.)

Թող հնչեն, թող փչեն պատերազմի փողերը,

Թող կոչեն դէպի զէնք դէպի կռիւ նորա.

Վաղն այս մեր դրօշակները կը ցցվին

Այդ ատամնաձեռքերդի գլխին վրայ.

Երբէք չէր խոստացած ոչ մի յաղթութիւն

Այսպիսի առատ յոյսեր և փառք,

Այն տեղ սպասումն պատիւ, ցնծութիւն

Այն տեղ ճոխ աւար և դափնի պտակ —

(Հեռանումն.)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Գալիս է ՎՈՄՍԸ եր վրածից վրդովված. նայումէ, հաստեւոր ամրոցի վրայ:

ՎՈՄՍ

Նա իմ թշնամու ձեռքումն է. այս մտածմունքը

Ուր որ երթումեմ, որպէս հայաճական դեւ,

Միշտ իմ գլխում է. նա իմ թշնամու ձեռքումն է —

Բայց շուտով արշալուսի միջոցին, ես նորանց

Կը բաժանեմ իրարից — ո՛հ, Լէոնորա.

(Լսվումէ մի աղաղակ.)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

Գալիս է Ֆերնեսնոն

ԿՈՄՍ

Ի՞նչ կայ.

ՖԵՐՆԵՍՆՈՆ

Բանակի մօտերում

Ման է գալիս եղած մի Յինգա կին: Վրայ են հասել
Մեր պահապանները շուտով,
Նա կամեցել է փախչել: Եւ վախեցածից ենթադրել են,
թէ նա է մի լրտես, շրջապատել են —

ԿՈՍՍ

Բռնե՞լ են.

ՖԵՐՆԵՍՆՈՆ

Անշո՛ւշտ.

ԿՈՄՍ

Դու տեսա՞ր նորան

ՖԵՐՆԵՍՆՈՆ

Ոչ: Թիկնապահ զօրաց
Հարիւրապետը ասաց ինձ.

(Սղապակը աւելի է լավում.)

ԿՈՄՍ

Ահա ինքը:

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԳ

Պահապանքը Սղապակի մեռելից կապած, բերումն քաշաքաշ, նոցա քամակից զնուորքը:

ՊԵՀՍՊԵՆԷ

Առաջ գնա, ո՛վ կախարդ, առաջ գնա.

ՍԶՈՒՉԵՆՍ

Օգնեցեք. ինձ թողէք — ո՛վ կատաղածներ,
Ի՞նչ է իմ մեղքը —

ԿՈՄՍ

Մօտեցիր այս տեղ,
Եւ ինձ պատասխանէ՛լ
Քայց թէ սո՛ւտ խօսիս, վախեցի՛ր,

ՍԶՈՒՉԵՆՍ

Հարցո՛ւր.

ԿՈՄՍ

Ո՛ւր էիր գնում

- ԱԶՈՒՉԵՆՆ
Չեմ գիտում:
- ԿՈՄՍ
Ի՞նչպէս, թէ չես գիտում:
- ԱԶՈՒՉԵՆՆ
Միայն ցինգաների սովորութիւնն է
Առանց գիտնալու ման գալ
Նոցա հովանին երկինքն է, հայրենիքը երկիր:
- ԿՈՄՍ
Ի՞նչ տեղից ես եկած
- ԱԶՈՒՉԵՆՆ
Բիագայիայից, ուր որ է
Իմ բնակութիւնը ամայի սարերում:
- ԿՈՄՍ
Բիագայիայից:
- ՓԵՐՆԵՆԻՕ
(Ի՞նչ եմ լուս, ո՞հ, սա կասկածելի.)

(№ 14).

- ԱԶՈՒՉԵՆՆ
Այն տեղ ողորմելիապրումէի, իմ վիճակից գոհանալով:
Յոյրս որդուս դրած էի, որ ինձ թողնց մոռանալով:
Ես դատարկ, մտրո երթումեմ այդ իմ որդուն
որոնումեմ,
Այդ որդին, որ իմ սըրտին սաստիկ կակիծ պատճառած է.
Բայց իմ պէս ջօրեղ սիրով երկրումս մայր եղած չէ.
- ՓԵՐՆԵՆԻՕ
(Ի՛սկ նորա դէմքն է.)
- ԿՈՄՍ
Վաղո՞ւց է որ բնակվումես
Այն սարերում:
- ԱԶՈՒՉԵՆՆ
Այո՛, վաղո՛ւց:
- ԿՈՄՍ
Տեղեկութիւն ունի՞ս արդեօք
Կոմսի զաւակի մասին,
Որ ամբողջ տարել էին.
Կը լինի տասն ու հինգ տարի:
- ԱԶՈՒՉԵՆՆ
Բայց ասա ինձ դու ի՞նչն ես նորա...
- ԿՈՄՍ
Եղբայրը:
- ԱԶՈՒՉԵՆՆ
(Ո՛հ)
- ՓԵՐՆԵՆԻՕ
(Հա՛.)
- ԿՈՄՍ
(Նկատելով, որ Սչու շնանն գոռարանուկ երկիւղը
թաքցնել.)
Դու ոչինչ չգիտես նորա մասին:

- ՄՁՈՒՉԵՆՍ
Ե՛ս... ոչ... արձակեցէք, որ
Ես որդուս գտնելու երթամ՝.
- ՖԵՐՆՆԵՒՕ
Մնացի՛ր, անզգամ...
ՄՁՈՒՉԵՆՍ (Ի՞նչը երան.) Աւճող ինձ...
ՖԵՐՆՆԵՒՕ Գու տես թէ ի՞նչ
Չարագործութիւն է որ սա կատարել է.
ԿՈՄՍ Ասա՛, ասելիքդ:
ՖԵՐՆՆԵՒՕ Սա ինքն է:
ՄՁՈՒՉԵՆՍ (Կամայ ասու՞մէ Ֆերնանդին.) Լուի՛ր,
ՖԵՐՆՆԵՒՕ Սա ինքն է, որ մանուկին այրել է:
ԿՈՄՍ Ո՛հ, անհաւատ:
ԽՈՒՄԲ Այո՛, սա ինքն է.
ՄՁՈՒՉԵՆՍ Ո՛չ, նա սխալվումէ.
ԿՈՄՍ Է՛լ չես ազատվիլ քո պատուհասից
ՄՁՈՒՉԵՆՍ Աւճող ինձ.
ԿՈՄՍ Պինդ կապեցէք այդ նշուվածին
(Ձեռուորդը կատարումն է)
ՄՁՈՒՉԵՆՍ Ո՛վ Աստուած, ո՛վ Աստուած.
ԽՈՒՄԲ Կանչէ՛ ո՛րքան կամիս.
ՄՁՈՒՉԵՆՍ Եւ դու ինձ չես լուում,
Ո՛վ իմ որդի. ո՛վ Մանրիկօ.
Ինձ օգնել չես հասնում
Օգնել տարաբաղդ մօրդ.
ԿՈՄՍ Հաւատալի՛ք է
Սա մանրիկօյի մայրը՞
ՖԵՐՆՆԵՒՕ Գողա՛. վախեցի՛ր.
ԿՈՄՍ Ի՞նչ բաղդ, այժմ նա իմ ձեռքումն է.
(№ 14 պարբերական)
- ՄՁՈՒՉԵՆՍ Ո՛հ, թուլացուցէ՛ք, ո՛վ բարբարոսներ,

Այս չուանի կապը ինձ քերթումէ —
 Այսքան անողորմ չարչարանքը
 Երկարատև մի մա՛հ է:
 Իսկ դու անզգամ ծնողաց
 Անօրէն ամենավատ զաւակ,
 Վախեցիր — խեղճերի համար կայ Աստուած.
 Եւ քեզ պիտի պատժէ Աստուած.

ԿՈՄՍ

Ո՛վ գարշելի ցինգա, քո ցեղեցն է
 Այն մոլորցնողը.
 Արդեօք քո պատիժը կարօղ է
 Վիրաւորել նորա սրտի կէտը:
 Իմ սրտի մէջ ուրախութիւն է ծագում
 Այս անմեկնելի պատահմունքը.
 Փոխանակ եղբորս մահուան
 Քեզանից կը հանեմ վրէժը.

ՖԵՐՆԵՆԴՕ և ԽՈՒՄԻ

Անիրաւ խարուկը վառվումէ.
 Անիծված, և կը տեսնես դու շուտով
 Միայն քո պատիժը լոկ
 Չէ լինելու խարուկով.
 Այն տեղ զժոխքի բոցը քեզ
 Սպասումէ սպասում
 Նա՛ քո անշէջ խարուկը,
 Որ չարաչար պիտի էրէ
 Քո հոգին մինչև վերջը:

(Կոմսի նշան տալովը, զհետոքը քաջաբաշ տանումն
 Սգուշնային: Կոմսը մտնում է իր վրանը. Ֆերնանդօն
 նորա քամակից):

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դահլիճ, վանքի առջեւ, Կաստելոր ամրոցի մէջ. խորքումը կայ մի պատուհան:

ՄԵՆՐԻՊՕՆ, ԼԵՌՆՈՐԵՆ և ԲՈՒԻՑԸ.

ԼԵՌՆՈՐԵ

Այս ի՞նչ զէնքերի շարժումնք է
 Խառն անց ու դարձով.

ՄԵՆԻԿՕ

Վտանգը հասած է,
Ծածկելը զո՛ւր է:
Առաւօտը ծագելիս մեղ պիտի պաշարեն

ԼԷՈՆՈՐԵ

Աւաղ ինձ. — ի՞նչ ես ասում:

ՄԵՆԻԿՕ

Քայց մեր թշնամիներին
Կարող ենք անշուշտ յաղթել —
Մեր սուրը պիտի ղօրեղանայ նոցա դէմ,
(Բուխըն)

Գու գնա գործ տեսնել,
Մինչ իմ գալը, քեզ յանձնումեմ
Ամենայն ինչ պատրաստել:

(Բուխըն հեռանում է)

ՏԵՍԱԲԱՆ ՎԵՅՆԲՈՐԳ

ՄԵՆԻԿՕՆ և ԼԷՈՆՈՐԵՆ

ԼԷՈՆՈՐԵ

Ի՞նչ տխուր լուսով
Լուսաւորվումէ այս մեր պսակը:

ՄԵՆԻԿՕ

Այդ տխուր մտածմունքը,
Ո՛վ իմ սիրական, ցրուէ՛ փարատէ՛:

ԼԷՈՆՈՐԵ

Կարո՞ղ եմ միթէ:

ՄԵՆԻԿՕ

Սէրը, գերազոյն սէրը միայն պէտք է,
Որ այս բոպէիս լինի քո սրտում:

(№ 15.)

Ո՛հ, այո՛ իմ անգին, այժմ լինելով
Ես քո, և դու իմ ամուսինը,
Արդէն հոգիս զօրանալով
Ամրանումէ ահա իմ բազուկը.
Քայց այդ, եթէ ճակատագիրը
Իմ վիճակի մասին նշանակած է,
Որ ինձ թշնամեաց սուրը

Վիրաւորելով պիտի զոհէ,
 Այն տեղ փչելով իմ վերջին շունչը,
 Քո մասին լրկ պիտի մտածեմ, ստոյգ է,
 Եւ միմիայն երկնքի մէջ կը հանդիպինք
 Մահից յետոյ միմեանց մենք:

(Վալուսէ Երզնէանի հնչիւն մտակոյ վանքից.)

(Երկուքը միասին.)

Խորհրդաւոր այս հնչիւնը
 Մեր սրտում է տարածվում.
 Երթանք տաճար ուր սուրբ սէրը,
 Ուրախ, մեզ է սպասում:

(Ձեռք մեքի բռնած ոտքի ուրախ մտնում են միասին
 դէպի եկեղեցին, այդ մեղեցին Բուխը շտապելով ներս
 է մտնում.)

ԲՈՒՒՑ Մանրի՛կօ.
 ՄԵՆՐԻԿՕ Ի՞նչ է.
 ԲՈՒՒՑ Տես ցինդա կիներ,
 Արի, ահա շղթայած են նորան տանում .
 ՄԵՆՐԻԿՕ Ո՛հ, Աստուած
 ԲՈՒՒՑ Նորա համար այն բարբարոսքը
 Արդէն խարոյկ են վառում :
 ՄԵՆՐԻԿՕ Ո՛վ երկինք, թուլանում են իմ անդամքը —
 Աչքերս են մթանում:
 ԼԷՈՆՈՐԵ Պու դող՛ւմես.
 ՄԵՆՐԻԿՕ Եւ կայ տեղիք. իմացի՛ր,
 Ես եմ...
 ԼԷՈՆՈՐԵ Ասա, ո՞վ .
 ՄԵՆՐԻԿՕ Նորա որդի՛ն.

Ա՛խ, շունք, այդ չար տեսարանը
 Համարեա շունչս կտրումէ
 Հաւաքէ՛ մեր մարդոցը,
 Բույի՛ց, գնա՛, դարձի՛ր, շտապէ:

(Բուխը հեռանում է.)

(№ 16.)

Ո՛հ, այդ խարուկի ահարկու բոցը
 էրում, լափումէ իմ հոգու տունը.
 Լցէ՛ք, մարեցե՛ք, թէ չէ ես շուտով
 Կը մարեմ նորան բուն ձեր արիւնով:
 Նորա որդին էի դեռ քեզ չ'սիրած,
 Չեմ կարող տանել նորա տանջանաց:
 Տարաբաղք մայրիկ շուտով կ'ազատեմ,
 Կամ միասին քեզ հետ, ես էլ կը մեռնիմ:

(Լեոնորայն.)

ԼԵՈՆՈՐԱ

Ես այս կսկիծը չեմ կարող տանել .
 Բարւոք է նոյնպէս և ինձ մեռանել :

(Բուկը վերադառնում զնուորնեքով.)

ԲՈՒԻՅ և ՋԻՆՈՒՈՐԳ

Դէպի զէ՛նք, դէպի զէ՛նք հրամայէ շուտով,
 Պատրաստ ենք կուլել և քեզ հետ մեռնել :

(Մանրիկան շտապելով երթումէ, նորա քամակից Բուկը և զնուորքը. դրոշի լավումէ զենքերի շարժմանք, և պատե-
 բազմական գործիքների շառաչանք)



Չ Ո Ր Ր Ո Ր Գ Մ Ա Ս Ն

ԳԼԽԳԵՐՏՈՒԹԻՒՆ.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ելեաքերից պալատի ամրոցը, որի անկիւնում կայ մի աշտարակ, սորա լուսամուտը կապած է երկաթէ
 վանդակով: — Խաւար գիշեր: — Գալիս են երկու անձներ, վերարկուի մէջ փաթաթված:

Նոցա են ԲՈՒԻՅ՝ և ԼԵՈՆՈՐԱՆ.

(№ 17.)

ԲՈՒԻՅԸ (Ջգաստութեամբ.)

Հասանք:

Ահա աշտարակը, որի մէջ կենումեն

Տանջուկով կալանաւորքը.
Աւաղ, այն խեղճին այն տեղ մաշումեն:

Գնա՛ դու

Եւ թող ինձ, մի վախենալ իմ մասին,
Կարելի է կարնամ փրկել անբաղդին.

(Բուխը հեռանումէ.)

Իսկ ինձ վախենալ իմ մասին. — շատ արնագ է
Ներգործութիւնն իմ զէնքի՛:

(Աւաղը մտաւոր մտաւոր վրայ, որ հազած
ունի աջ ձեռքի մասումէ.)

Այս խաւար գիշերն ահա, անց է կենում
Եւ եկած եմ քո մօտ, և դու չես գիտում:
Երբեքուհ Տոյ և օդ, որ մեր շուրջ բոլոր շարժում
չչնչումէք,
Ո՛հ, ինչպէս ինձ, նորան այս ողբը հասուցէք.

(№ 17 պարտիզալ)

Սիրու վարդեղեն թելերով,
Թռիւր, հառաչանք ողբալի,
Հասիր, սփռիւ կարեկցելով
Սիրտը խեղճ բանտարկվածի:
Չերթ գեփիւն ախորժելի
Չովացուր կացած սենեակը,
Շարժէ նորա յիշողութիւն
Նորա մէջ քնած սէրը.
Բայց, ո՛հ, մի՛ յայտներ ուղղակի,
Չարչարանքը, չարչարանքը իմ սրտի:

(Լսումէ հոգեհանգստի զանգահարութիւն)

ՉՅՆՆԻՐ (Ներքին.)

Ողբումէ՛, Տէր, ողբումէ՛ մեղապարտ հոգուն,
Որ այս աշխարհքից հեռանում անվերադարձ.
Ողբումէ՛, Տէր, ու գթա՛ քո Որդու սիրուն
Եւ մի՛ մատներ դժոխային տանջանաց:

(№ 17 պարտիզ.)

ԼՆՈՆՈՐՍ

Ինչ հնչիւն, ինչ աղօթք, այս խաւար օդի մէջ.
Պատումէ ինձ դողոցք, թուլանում իմ մէջք.

Գորա հակառակ շունչս է կտրվում,
Սիրտս սարսափած խիստ արագ գարկում:

(Մտում է թուլացած, մի քանի վայրկեան շուրած մալուց յետոյ կամենում է հեռանալ, բայց յանկարծ լսում է աշտարակի մեջից մի հառաչանք և խեղճ մի ողբալի հնչիւն այն տեղ դադարում է.)

(Ձեռք 17 պատմ.)

ՄՆՆՆԻԿՈ (Նշտարակէց.) Աւաղ, որ փրկարար մահը չէ գալիս հասանում շուտով.
Առ իր սրտանց կանչողը, Լէոնորա, կացի՛ր բարով:

ԼԵՈՆՈՐԱ Ո՛վ երկինք, ոգիս քաղվում է:

ՉՅՅՆԵՐԸ (Ներսէց.) Ողբում է, Տէր, ողբում է՝ մեղաւարտ հոգուն,
Որ այս աշխարհքից հեռանում անվերադարձ.
Ողբում է, Տէր, ու գթա՛, քո Որդու սիրուն
Եւ մի մատներ դժոխային տանջանաց.

(Չայնու որդիս գինը հնչիւնն.)

ԼԵՈՆՈՐԱ Մահն իր սև թիւերն, այս բանտի վերայ,
Ահարկու փռել, կացել անդգայ.
Աւաղ, այս դռները գուցէ բացվում են,
Որ անշունչ դիակ միայն դուրս թողնեն.

(Չայնու որդիս սիւղիւն.)

ՄՆՆՆԻԿՈ (Նշտարակէց.) Քեզ անչափ սիրածիս համար
Արիւնս թափում եմ ահա.
Եւ դու ինձ չմոռանալով,
Եւ դու ինձ չմոռանալով, Լէոնորա,
Ո՛վ Լէոնորա, կացի՛ր բարով:

ԼԵՈՆՈՐԱ Ես քե՛զ, ես քեզ ի՛նչպէս մոռանամ.

(Մտանում է աշտարակին.)

(Ձեռք 18 Աղջիկն պատմութեամբ.)

Դու կրտսնսնս ինչ վառ սիրով
Աշխարհքումս քեզ սիրած եմ.
Իմ բազդի հետ միշտ կովելով
Մինչև մահին էլ յաղթել եմ.

Ո՛հ, առաւել շուտ ես իմ կեանքը
 Կը տամ, որ քոնը աղատեմ,
 Կամ թէ քեզ հետ միանալով,
 Գէպի գերեզման կ'իջանեմ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Դուրս է գալիս ԿՈՄՍԸ, երկու մարդով: — ԼԷՈՆՈՐԵՆ հեռանումէ դէպի մի առանձին տեղ:

ԿՈՄՍ

Լսեցի՞ք, ինչպէս հրամայել եմ,
 Որդուն թրով, մօրը խարուկով.

(Հեռակէցքը հեռանալով մտնումն փոքր դռնից
 աշտարակի ներքո.)

Կարելի է գործ եմ դնում դէպի չարը
 Քղեշտի ինձ տուած իշխանութիւնը.
 Այս բոլոր իմ յանցանքին պատճառ եղած է կիներ.
 Եւ ո՛ւր է արդեօք այդ խեղճը:
 Քաւական ժամանակ է որ առել եմ Կաստելօրը,
 Նորա մասին ոչ մէկ լուր չիմացայ ես.
 Ո՛րքան որոնեցի, ո՛րքան, իզուր եղաւ բոլորը.
 Ո՛հ, անգութ, ո՛ւր տեղ ես.

ԼԷՈՆՈՐԵ (Սոջե գալով.)

Քո առջևում.

ԿՈՄՍ

Այս ձայնը... ի՞նչպէս տիկին, դ՞ու է ես.

ԼԷՈՆՈՐԵ

Տեսնումես, ահա. :

ԿՈՄՍ

Ինչի՞ ես եկել:

ԼԷՈՆՈՐԵ

Նորա մահուան ժամը ահա մօտեցած է
 Եւ դու ինձ հարցնումես:

ԿՈՄՍ

Տակաւին համարձակվումես:

ԼԷՈՆՈՐԵ

Ո՛հ, այո՛, և նորա մասին
 Ողորմութիւն եմ խնդրում ...

ԿՈՄՍ

Ի՞նչ, դու ցնորված ես.
 Ես իմ թշնամու վրայ գթամ ողորմիմ:

ԼԷՈՆՈՐՍ

Ողորմած Տէրը թող շարժէ քո գուժը...

ԿՈՄՍ

Իմ Տէրը վրէժ է շարժում միայն... գնա՛:

(Լէնորան սարսփած է յուսահատ ընկնում նորա ոտքերը:)

(ՁԵ 19.)

ԼԷՈՆՈՐՍ

Տեսի՛ր, ես դառն արտասուքով ընկած եմ՝ քո առաջնը.
Թէ բաւական չե՛ս իմ լացով. կտրէ, խմէ՛ իմ արիւնը.
Արա ոտնակոխ մարմինս. բայց, աղատէ Տրովատորը:

ԿՈՄՍ

Ո՛հ... այդ անարժանի գրութիւնը
Կը կամենայի էլ վատթարացնել,
Եւ բիւրաւոր չարչարանքով
Նորա մահը երկարել...
Որքան քո սէրը զօրեղանումէ,
Այնքան իմ ոխը բորբոքվումէ:

(Կամենումէ հեռանալ.)

(Լէնորան փաթաթվումէ խկոյն.)

ԼԷՈՆՈՐՍ

Կո՛մս.

ԿՈՄՍ

Երբէ՛ք —

ԼԷՈՆՈՐՍ

Ողորմէ՛:

ԿՈՄՍ

Ոչ բնա՛ւ, հնար չկայ
Նորան խնդրել աղատութիւն.

ԼԷՈՆՈՐՍ

Լոկ մէկ հնար միայն կայ,
Եւ այն զոհումեմ ես քեզ.

ԿՈՄՍ

Ի՞նչ ասել կ'ուզես

ԼԷՈՆՈՐՍ

Ես ինքս եմ այդ հնարը

(Տրում սրտով տալիս է իր աջ ձեռքը)

ԿՈՄՍ

Երկի՛նք. դու ասումես.

ԼԷՈՆՈՐՍ

Եւ կը կատարեմ
Իմ խոստմունքն, անշուշտ:

ԿՈՄՍ

Արդևոք երազում եմ տեսնում...

ԼԷՈՆՈՐՍ

Բանալ տուր այդ բանտի դուռը,
Թող նա ինձ լսէ — երբ որ զոհը
Արձակուի, կը լինիմ քոնը.

ԿՈՄՍ

Ուրեմն երդուիր,

ԼԵՌՆՈՐՍ

Վկայ է Աստուած, որ իմ սիրտը
Բոլորովին տեսնումէ.

ԿՈՄՍ

Ո՛վ կայ այդ տեղ.

(Շտապով երթումէ դէպի աշտարակի մուտքը, այն տեղից
զուրս գալիս է բանտապետը: Կոմսը դազանի խօսումէ նորա
Հնա. Լէոնորան մասանիի մէջ պահած թղթը ձծումէ.)

ԼԵՌՆՈՐՍ

(Ես կը լինիմ, բայց սառած մարմնով, անկենդան.)

ԿՈՄՍ

(Վերադառնալով դէպի Լէոնորան.)

Փրկված է նա.

ԼԵՌՆՈՐՍ

(Ինքը իրեն, աչքերը ցրուած ուրախելի արտասուքով.)

(№ 20.)

Փրկվա՛ճ է. այս ի՞նչ ցնծութիւն է
Ո՛վ Տէր իմ, այս անասելի է...
Բայց իմ սրտի արագ թնդացքը
Քոհնութիւն քեզ ուղարկումէ:
Իմ վախճանի ժամն հասնումէ.
Ուրախ դէմքով սպասումեմ —
Քոնէ կ'անեմ մեռանելով.
»Սիրականս, քեզ փրկումեմ»:

ԿՈՄՍ

Ինքդ քեզ ի՞նչ ես խօսում —
Ո՛հ, դարձիր ինձ, դարձիր, ասա թերևս,
Այդ ի՞նչ ցնորք ձևացնումես.
Մինչև այժմ այն լսածներս...
Դու իմն ես, դու իմն ես, կրկնէ՛,
Կասկածանքը իմ սրտի ցրուէ՛ —
Ո՛հ, թէ չէ, անկարելի կարծումեմ,
Ինչ որ քեզնից լսել եմ.

ԼԵՌՆՈՐՍ

Երթանք.

ԿՈՄՍ

Երդումը... մտքո՞ւմդ է.

ԼԵՌՆՈՐՍ

Իմ խօսքը սուրբ է:

(Մտնումն աշտարակի մէջ.)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՋՄԻՆՈՒՐԵԼԻ ԲՆԵՏԸ:

Մի կողմում երկաթակապ լուսամուտ. խորքումը կայ մի դուռ: — Եռաստաղի կամարից կտիած է կիսավառ լապտեր. ՍԶՈՒՉԵՆՆԵՆ պառկած է կոշտ մահճակալի վրայ. ՄՄՆԻԿՕՆ նստած նորա մտում:

ՄՄՆԻԿՕ

Մայր իմ, քնած չե՛ս.

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Ուրբան ահա կամեցայ,
Քայց քունը փախչումէ իմ աչքերից, աղօթումեմ...

ՄՄՆԻԿՕ

Առաւօտեան ցուրտը սառցն ո՛ւմէ
Կարելի է քո անդամները:

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Ոչ. այս գերեզմանից
Կամենումեմ, միայն, կենդանի փախչել.
Պատճառ, զգումեմ, շունչս ահա խեղդվումէ:

ՄՄՆԻԿՕ

Փախչել...

(Չեաքերը տրորելով.)

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Մի՛ տրտմիր դու:

(Վեր է կենում.)

Այն անգութները կարող չեն իմ տանջանքը երկարել.

ՄՄՆԻԿՕ

Աւաղ. ի՛նչպէս —

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Տեսնո՞ւմես ահա սեռ նշանը,
Իմ ճակատի վերայ արդէն կնքած.
Այդ մահճի դրոշմն է:

ՄՄՆԻԿՕ

Աւաղ.

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Գտնելու են միայն մի անշունչ, սառած մարմին.
Այլլէ չորացած ոսկերք.

ՄՄՆԻԿՕ

Հերիք է՛.

ՍԶՈՒՉԵՆՆԵ

Ձեռ լսում մարդոց մտնե՛նալը.
Այդ դահճիճներն են — որ գալիս են դէպի խարոյկ
Ինձ քաշել. ո՛հ պաշտպանէ քո մօրը.

ՄԱՆՐԻԿՕ

Անտարակոյս, դու միամիտ կաց, այս տեղ եկող չկայ:

ԱԶՈՒՉԵՆՍ

Խարոյկ. ասելը զարհուրելի է.

ՄԱՆՐԻԿՕ

Ո՛հ, մայր իմ: — ո՛հ մայր.

ԱԶՈՒՉԵՆՍ

Մի օր կատաղի ամբոխը տանումէր քո մեծ մօրը
 Գէպի խարոյկ — տես բորբոքվումէ բոցը.
 Նորան է դեպում արգէն. ահա էրվումեն մաղերն
 Գէպի երկինք թռչումեն կայծերն.
 Նայէ, դուրս ընկնումեն աչքի տուները,
 Աւաղ. ինձ ազատէ այս ահեղ տեսարանից.

(Ընկնումէ Մանրիկօ գիբը բորբոքին սարսափած.)

ՄԱՆՐԻԿՕ

Եթէ ինձ սիրումես, եթէ ձայնը
 Որդու կարող է մնալ մայրական սրտում,
 Աղաչումեմ հոգոյդ զարհուրանքը մոռացիր
 Աշխատէ՛ քնել, և հանգստացիր.

(Ցանումէ մահճակալի մօտ)

(№ 21.)

ԱԶՈՒՉԵՆՍ

Այո՛, յոգնած եմ, ինձ նեղումէ... ո՛վ որդի,
 Ահա՛, այս տեղ ես կը հանգստանամ, իմ սիրելի:
 Բայց եթէ տեսնես խարոյկը վառուն,
 Եւ զարհուրելի բոցը, զարթեցուր իսկոյն.
 Ննջէ ով մայր իմ. Աստուած պարգևէ
 Քո տրամուխեան տեղ քեզ մի խաղաղ քուն:

ԱԶՈՒՉԵՆՍ (Թմրելով և քնաթաթախ.)

Գէպի մեր սարերը կը վերադառնանք
 Մեր խաղաղ կեանքը նորից կստանանք —
 Գու կը հնչեցնես էլ քո գաւինը
 Ես խաղաղ քնով կը հանգչիմ մօտդ:

ՄԱՆՐԻԿՕ

Ննջէ՛ ո՛վ մայր իմ: Ես լուռ և անխօս
 Կաղաչեմ երկինք հոգով սրտով:

(Մղուշնան քնելու վրայ է. Մանրիկօն ծնկալոր քնումէ նորա մօտ):

ՏԵՍԱՐԱՆ ՁՈՐՐՈՐԿ

Բացվումէ բանտի դուռը, գալիս է ԼէճՆՈՐԱՆ՝ — Մէ փորձեց յետոյ ներս է մտնում և ԿՈՄՍԸ
Երկու զինուորով:

—

ՄԵՆՐԻԿՕ Երկիրնք. չեմ սխալվում — այդ կրակի լոյս է.
ԼէճՆՈՐԱՆ Ե՛ս եմ, Մանրիկօ —

ՄԵՆՐԻԿՕ Ո՛հ, իմ ԼէճՆորա.
Ո՛հ, Աստուած ինձ ողորմութիւն պարգևում է.
ԼէճՆՈՐԱՆ Որ մե՛ծ ուրախութեամբ մեռնիմ ես:

ԼէճՆՈՐԱՆ Դու չես մեռնիլ — եկել եմ քեզ փրկելու.

ՄԵՆՐԻԿՕ Ի՛նչպէս, ինձ փրկելո՞ւ, ստո՞յգ է.

ԼէճՆՈՐԱՆ Այո՛, հեռացիր — շտապէ, գնա՛ այս տեղից:
(Յոց տալիս է դէպի դուռը.)

ՄԵՆՐԻԿՕ Քայց դու չե՛ս գալիս:

ԼէճՆՈՐԱՆ Ես այս տեղ պիտի մնամ .

ՄԵՆՐԻԿՕ Պիտի մնա՞ս...

ԼէճՆՈՐԱՆ Աւա՛ղ, փախի՛ր:

ՄԵՆՐԻԿՕ Ո՛չ .

ԼէճՆՈՐԱՆ Եթէ յետացել ես...
(Որնուով մի հնար դուրսէց դուրս հանելու.)

ՄԵՆՐԻԿՕ Ո՛չ .

ԼէճՆՈՐԱՆ Քո կեանքը...

(№ 22 Երեւ. Յոյն.)

ՄԵՆՐԻԿՕ Արհամարհումեմ նորան
Արդ — դարձիր, ո՛վ տիկին, դէպի ինձ նայէ՛
Ի՛նչ է պատճառը. ի՛նչ գնով առիր իմ փրկութիւնը —
Խօսել չես ուզում — ո՛հ, փայլումէ ահեղ շշմարտութիւնը —
Թշնամուս եղել ես անձնատուր. հասկացայ —
Հասկացայ ես —

ՄԵՆՐԻԿՕ Այդպիսի վատութեամբ իմ սէրը ծախված է —
Ծախել ես մի սիրտ որով ինձ երդմնած ես:

ԼէճՆՈՐԱՆ Աւաղ, ինչպէս մոլորվումես —
Աւաղ, որքան յանիրաւի, դէպի ինձ դու անդու՞թ ես.
Յօժարացի՛ր — փախի՛ր, թէ չէ ամենը կորած է,
Կամ թէ երկիրնքը քեզ պիտ՛ փրկէ.

(ԼէճՆորան ընկնումէ Մանրիկոյի ոտերը.)

- ԱԶՈՒՉԵՆԵՆ *երազի մէջ*) Գէպի մեր սարերը կը վերադառնանք —
Մեր խաղաղ կեանքը նորից կստանանք —
Գու կը հնչեցնես էլ քո գաւիւնը
Ես խաղաղ քնով կը հանդիմ մտող:
- ՄԵՆՐԻԿՕ
Հեռացի՛ր այս տեղից:
- ԼԵՈՆՈՐԵ
Մի ատել՛ր ինձ.
Տեսն՞ումես — զօրութիւնս նուաղումէ:
- ՄԵՆՐԻԿՕ
Գնա — դու ատելի ես —
Գու անիծված ես —
- ԼԵՈՆՈՐԵ
Ո՛հ, հերիք է. —
Մի անիծաներ այլ կամեցիր այժմ
Ինձ համար առ Աստուած մաղթել :
- ՄԵՆՐԻԿՕ
Իմ սրտի վրայ սառուց պատումէ:
- ԼԵՈՆՈՐԵՆ *(երերալով.)* Մանրիկօ՛.
- ՄԵՆՐԻԿՕՆ *(վազում է բռնել որ չբնկնի.)*
Տիկին թուլանումես — ասա՛ —
- ԼԵՈՆՈՐԵ
Այս, մեռանելու նշան է:
- ՄԵՆՐԻԿՕ
Մեռանելո՞ւ.
- ԼԵՈՆՈՐԵ
Ո՛հ, կարելի է արդէն թոյնը ներդործումէ,
Որ ես չէի մտածում :
- ՄԵՆՐԻԿՕ
Ո՛վ, կայծակներ՛:
- ԼԵՈՆՈՐԵ
Լսի՛ր. ձեռքերս սառչումէ —
Քայց այս տե՛ղ, այս տե՛ղ, զարհուրելի կրակ կայ —
(Չեռքերը տանում է սրտին.)
- ՄԵՆՐԻԿՕ
Ո՛վ երկինք — սա ի՛նչ պատիժ է.
- ԼԵՈՆՈՐԵ
Քան որ կենդանի լինիմ ուրիշին —
Ես քո տեղ մեռանել կամեցայ.
- ՄԵՆՐԻԿՕ
Անմի՛տ, և ես այսպիսի հրեշտակին
Անիծել յանդգնեցայ:
- ԼԵՈՆՈՐԵ
Ո՛հ, չեմ — զիմանում —
- ՄԵՆՐԻԿՕ
Աւա՛ղ, ողորմելի —
(Գալիս է Կոստը և կանգնում բանտարկվածների մէջ.)
- ԼԵՈՆՈՐԵ
Այս բռպէ՛ին ես մեռնումեմ —
Մանրիկօ՛. — այժմ քո փրկութիւնը,
Երկնային Հօրից խնդրումեմ :
- ՄԵՆՐԻԿՕ
Անմի՛տ, և ես այսպիսի հրեշտակին —
Անիծել յանդգնեցայ:

- ԼԷՈՆՈՐՇ **Քան որ կենդանի լինիմ ուրիշին
Ես քո տեղ մեռանել կամեցայ:**
(Մեռանում է.)
- ԿՈՄՍ **(Աւաղ, կամենալով ինձ խարել,
Քուն իր անձը կորցրեց.
Տարե՛ք դորան պատժելու:**
(Մանրեկոթ վրայ է ցոյց տալիս.)
- ՄԵՆՐԻԿՕ **Մայր իմ. ո՛վ մայր իմ, մնաս բարով
(Տանում են զինուորքը.)**
- ՆՁՈՒՉԵՆՆԵՍ (Ձարթելով.) **Մանրիկո՛ — ո՞ւր է իմ զաւակը**
- ԿՈՄՍԸ **Մահի առջևում —**
- ՆՁՈՒՉԵՆՆԵՍ **Ո՛հ դադարեցուր — ինձ լսէ —**
- ԿՈՄՍ (Քաշում է Նջուզենային պատուհանի մտ.) **Տես.**
- ՆՁՈՒՉԵՆՆԵՍ **Ե՛րկինք.**
- ԿՈՄՍ **Արդէն վերջացա՛ծ է:**
- ՆՁՈՒՉԵՆՆԵՍ **Արդէն վերջացած է, ասումես, վերջացած է
Լսէ ուրեմն, լսէ.
Այն մի ժամանակ քո եղբորը,
Որ այն ատելի Յինգա կինը
Քո հօրից գողացել էր...
Սա՛ է, սա՛ քո եղբայրն էր:**
- ԿՈՄՍ **Սա՛ էր. ո՛հ, այս ի՛նչ կսկիծ:**
- ՆՁՈՒՉԵՆՆԵՍ **Ո՛վ մայր իմ վրէժդ առնոված է.
(Ընկնում է պատուհանի առջևը.)**
- ԿՈՄՍ (Ինքը երևն ասելով.) **Իսկ ես ապրումեմ դեռ ևս.**

ՏՐՈՎԱՏՈՐ.
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ.
ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ.

ՏԵՍԱՐԱՆ 1. - Գաւիբը Ալիաֆերիայ պալատի: Կողմնական դռները, որ տանումն
դիպի Լուսինեան կոմսի սենեակները.

ԶՈՒԱՐԹ. աւելի անընդհատ.
All^o assai sostenuto. (M.M. ♩ = 88)

ԴԱՆԱԿ.
PIANO.

sussurro *ff*

pp

tr

tr

ԵՐԵՒՈՅԹ I (Ֆերլանդոս, եւ կոմսի շատ սպասաւորները, որ
SCENA I (Ferrando e molti famigliari del Conte che giacciono

pp

2
 պառկած են դռների մօտ: Մի քանի Ջինուորք քայլում են խորքում.)
 presso la porta: alcuni nomini d'arme passeggiano in fondo.)

հուսազել.
 dimin.

Մեղմ p

Ֆերնանդոս. (Դուրս գալով ասում և պասաւորներին.)
 FERNANDO. (Parla ai famigliari vicini ad assepirsi.)

Վեր կա - ցեք, վեր կա - ցեք:

սաստ: ff

ՏՐՈՎԱՏՈՐ.

(Երգանիկ հայր երկու սիրուն գառակի.)

N^o 1.

(Di due figli vivea padre beato)

ՅՈՐԴՈՐ ԸՆԹԱՅԻՈՎ.

Andante con mosso. (M.M. ♩ = 88)

Պատմութիւն. Racconto.

Ֆերնանդո.
FERNANDO.

Երգանիկ հայր երկու սիրուն գառակի, Բա - ըի կոմս Լոււան

ԴԱՇԱԿ.
PIANO.

U.P

PP

հր. Հարգատ ծիծմայրը երկրորդ մանկի, Յ - ըր - ցի մօտ քնու -

PP

- միր. Մի առաւօտ լոյսը դեռ բացվումէր, նա դիպուածով գար -

P

բումէ, եւ գիտէր ո՞վ մանկ կի մօտ կանգնած էր:

ՏՐՈՎԱՏՈՐ.

(Գարշեի ծինգա.)

N^o 2.

(Abbietta zingara.)

ԶՈՒԱՐԹՈՒՆ.

Allegretto. (M.M. ♩ = 112)

con mistero. խորհրդաբար.

միջաձայն.

mezza voce.

Ֆերնանդո.
FERNANDO.

Գարշե - լի ծին - գա Մե - պա - ուս. կին էր,
Այն կա - խարդ կը - նոց Շու - սով բրու - նե - ցին,

ԴԱՇՆԱԿ.
PIANO.

Շատ - խօս խ - բե - բայ Հար - ցուկ կա - խարդ էր,
Խար - կում էր - վի - լու. Դա - տա - պար - սե - ցին,

ՄՄ

PP

Մանկ - կի ե - ըն - սին Գեղ - զեղ կայ - ու - մեր,
Բայց ա - նի - ծա - ծր Աղջ - կա - նը յանձ - նեց,

Խո - ժող. աջ - քե - ըր Ա - ըիս. եով վիճն եր. Միժ - մայ - ըր
 Հա - նել վը - ըն - ժը Եո - բան կը - տա - կեց: Եւ. այդ աղ -

վախ - ցած Բար - ձրաձայն բարձրաձայն կան - չեց Դուր - սից օգ -
 - ջի - կը աղ ջի - կը Լի - ով կա տա - ընց Կո - բաւ մա -

